ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՄԱՅԻՍԻ 2025 թվականի N 828-Ա

ՄԱՐՏՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, N 1447146 /ՆՈՐ ՆՄՈՒՇԻ ՎԿԱՅԱԿԱՆ՝ 25082023-06-0040/ ԳՐԱՆՑՎԱԾ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՂՂԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ՃԻՇՏ ՏԵՂԱԴԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1) ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24) ենթակետով, 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով Մարտուն Շահվերդյանի դիմումը, սեփականության իրավունքի N 1447146 /նոր նմուշի վկայական՝ 25082023-06-0040/ վկայականը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊ ընկերության կողմից տրված հատակագծերը, Ալավերդի համայնքի ավագանու 13.09.2024թ. N 105-Ա որոշումը, ՀՀ Լոռու մարզպետի 20.09.2024թվականի թիվ 732-Ա որոշումը, ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-15 եզրակացությունը՝

որոշում եմ.

1. Հիմք ընդունելով, որ 30.09.2003թ. գրանցված սեփականության իրավունքի N 1447146 վկայականը /նոր նմուշի վկայական՝ 25082023-06-0040/ թերի է կազմվել և վկայականում սխալ է նշվել գտնվելու վայրի տվյալները և հաշվի առնելով կադաստրային քարտեզի տվյալները, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, կատարել՝

Մարտուն Հարությունի Շահվերդյանին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Արդվի գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-017-0312-0001 ծածկագրից առանձնացվող, 0.061483 հա մակերեսով հողամասի տեղադիրքի ճշտում և հաստատել փաստացի ճիշտ տեղադիրքը՝ համապատասխանեցնելով իրական տեղադիրքին, համաձայն որակավորված անձի կողմից տրված հատակագծի:

2. Ալավերդի համայնքի Արդվի գյուղի վարչական տարածքում գտնվող, կադաստրային 06-017-0312-0001 ծածկագրից առանձնացվող, 0.061483 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները կադաստրային քարտեզում ուղղել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության՝ համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթով նշված հողամասի համար սահմանված նպատակային և գործառնական նշանակությանը:
3. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի, Արդվի բնակավայրի կադաստրային քարտեզի 06-017-0312-0001 ծածկագրից առանձնացվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության, 0.061483 հա մակերեսով հողամասին և հողամասում առկա անասնաշենքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի գյուղ Արդվի, 2 փոստային հասցեն:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2025թ. մայիսի 21
ք. Ալավերդի